

# ՍԱՂՄՈՍ 68

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Սինայի և Սրբարանի Աստվածը	Իսրայելի հանդեպ Աստծո բարության փառքը	Տանարում տոնախմբության պատարագ	Հաղթանակի ազգային երգ	Իսրայելի փառքի էպոս
<u>MT ներածություն</u>				
Գլխավոր երաժշտին, Դավթի սաղմոսը կամ երգը				
68:1-4	68:1-3	68:1-3	68:1-3	68:1-2 68:3-4
	68:4	68:4	68:4	
68:5-6	68:5-6	68:5-6	68:5-6	68:5-6
68:7-10	68:7-10	68:7-10	68:7-10	68:7-8 68:9-10
68:11-14	68:11-14	68:11-14	68:11-14	68:11-12 68:13-14
68:15-18	68:15-16 68:17-18	68:15-16 68:17-20	68:15-16 68:17-18	68:15-16 68:17-18
68:19-23	68:19-20 68:21-23	68:19-20 68:21-23	68:19-20 68:21-23	68:19 68:20-21 68:22-23
68:24-27	68:24-27	68:24-27	68:24-27	68:24-25 68:26-27
68:28-31	68:28-31	68:28-31	68:28-31	68:28-29 68:30-31
68:32-35	68:32-35p 68:35q	68:32-35q 68:35η	68:32-35q 68:35η	68:32-34u 68:34p-35q 68:35η

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)**  
**ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ**

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

**ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ա. Այս Սաղմոսում դժվար է գտնել միավորող թեմա: Հավանաբար սա Իսրայելի համար ՅԱՀՎԵԻ գործերի անթուղզիա է (այսինքն՝ Ելից, Նվաճում, Երուսաղեմում տաճարի հիմնումը): NASB Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 805) այն կոչում է «Իսրայելի Աստծո փառավոր և հաղթական իշխանության շքախմբով պատարագի տոնակատարություն»: Եթե սա ճիշտ է, ապա այս Սաղմոսը նման է Նեեմիա 9-ին:

- Բ. Որոշ գիտնականներ այս Սաղմոսը դիտարկում են որպես առանց թեմայի շարադրություն՝
1. NRSV, Նոր Օքսֆորդի Ծանոթագրության Աստվածաշունչը (էջ՝ 728) ասում է. «Սա ամենախրթին սաղմոսն է մեկնաբանելու համար, և չկա ընդհանուր համաձայնություն ոչ իր նշանակության մեջ որպես ամբողջություն կամ իր մանրամասներում»:
  2. UBS *Ձեռնարկը Սաղմոսների* շուրջ (էջ՝ 577) ասում է, «թե՛ որպես տեքստ և թե՛ որպես նշանակություն այս սաղմոսը ամենադժվարն է բոլոր սաղմոսների մեջ՝ հասկանալու և մեկնաբանելու հարցում: Ծարադրության մեջ գոյությունի չունի ընդգծված միասնություն»:
  3. Հրեական Սերտողության Աստվածաշունչը (էջ՝ 1353) ասում է՝ «Դրա բառապաշարը ներառում է տասնհինգ բառ, որոնց չեք հանդիպի Աստվածաշնչում և ոչ մի տեղ, հավելած մյուս հազվադեպ բառերը, և իհարկե դրանց բարդ բացատրությունները: Անշուշտ դրանցից շատերը երկիմաստ են մնում, և շատերը համարում են, որ այս սաղմոսը ամբողջ Սաղմոսացում ամենաբարդն է»:
  4. Ծարադրության ենթադրության պատճառներից մեկը Աստվածության բազմաթիվ կիրառված անուններն են (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ)՝
    - ա. *Էլոհիմ* (BDB 43), Սաղմ. 68:1,2,3,4,5,6,7,8 (երկու անգամ), 9,10,15,16,17,18,21,24 (երկու անգամ), 26, 28, 31, 32, 34, 35 (երկու անգամ):
    - բ. *Յահ* (BDB 43), Սաղմ. 68:4,18
    - գ. *Էլօահ* (BDB 43), Սաղմ. 68:8,28 (*Էլոհիմի* ԵԶԱԿԻՆ)
    - դ. *Ադոնայ* (BDB 10), Սաղմ. 68:11, 17, 19, 20, 22, 32
    - ե. *Շադայ* (BDB 994), Սաղմ. 68:14 (ՅԱՀՎԵԻ անունը Նահապետների համար, տես՝ Ելից 6:3)
    - զ. *Էլ* (BDB 42), Սաղմ. 68:19,20 (երկու անգամ), 35
    - է. ՅԱՀՎԵ (BDB 217), Սաղմ. 68:20,26
    - ը. Թագավոր (BDB 572 II), Սաղմ. 68:24

Գ. Հավանական ուրվագիծը ըստ թեմաների՝

1. ռազմական հաղթանակ

ա. Սաղմ .68:1-4 (անանուն թշնամիները հավանաբար Անապատի Դեզերումների շրջանից, Սաղմ .68:4բ)

բ. Սաղմ .68:11-14 (անանուն թագավորները, որոնք հարձակվեցին, սակայն պարտվեցին)

գ. Սաղմ .68:19-23 (անանուն թշնամիներ)

դ. Սաղմ .68:28-31 (Եգիպտոս)

2. ուխտի կենտրոնացում

ա. օգնություն ամենատկարներին, Սաղմ .68:5-6

1) որբերին

2) որբևայրիներին

3) աղքատին

4) միայնակին

բ. առատություն, Սաղմ .68:7-10

գ. Սինա, Սաղմ .68:15-18

3. տանարը

ա. Թագավորի և Իսրայելի ժողովրդի շքախումբը տանար գնալիս, Սաղմ .68:24-27

բ. բոլոր ժողովուրդները փառաբանում են Աստծուն (այսինքն՝ Սաղմոս 65-68-ի թեման), ով իշխում է սրբարանից (այսինքն՝ Երուսաղեմ, Սիոն, Մորիա լեռ, տանար), Սաղմ .68:32-35:

Հետևաբար, կարծում եմ այս Սաղմոսը մատնացույց է անում ռազմական հաղթանակ՝ շքախմբով տանարին մոտենալիս . ժամանակը անհայտ է:

**ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 68:1-4**

<sup>1</sup>Թող ելնի Աստված, թող Նրա թշնամիները ցրվեն,

Նրան ասողները թող փախչեն Նրա առջևից:

<sup>2</sup>Յրի՜ր նրանց, ինչպես ծուխն է ցրվում,

Ինչպես մոմն է կրակից հալչում,

Այդպես թող կորչեն ամբարիշտները Աստծո ներկայությունից:

<sup>3</sup>Բայց արդարները թող ուրախանան,

Աստծո առջև թող ցնձան,

Այո՛, մեծ ուրախությամբ թող ուրախանան:

<sup>4</sup>Երգեցե՛ք Աստծուն, սաղմոս երգեցե՛ք Նրա անվանը .

Մեծարե՛ք երկինքների վրա ձիավորողին,

Ում անունը ՅԱՀՎԵ է, ու ցնձացե՛ք Նրա առջև:

**68:1-4** Այս առաջին պարբերությունը ունի մի քանի *Qal* ԱՆԿԱՏԱՐՆԵՐ, որոնք հնարավոր է կիրառվում են ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով: «Թող...» և «եկեք» ԲԱՅԵՐԸ հարացույց են այս քերականական ձևի:

1. թող ելնի Աստված – BDB 877, KB 1086, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

2. թող Նրա թշնամիները ցրվեն – BDB806, KB 918, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

3. Նրան ասողները թող փախչեն Նրա առջևից – BDB 630, KB 681, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

4. թող կորչեն ամբարիշտները – BDB 1, KB 2, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

5. արդարները թող ուրախանան – BDB 970, KB 1333, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

6. Աստծո առջև թող ցնձան – BDB 763, KB 836, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

7. ցնձացե՛ք Նրա առջև, Սաղմ .68:4գ – BDB 759, KB 831, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

**68:1 «Թող ելնի Աստված (Էղիիմը)»** Սա կարելի հասկանալ երկու իմաստով՝

1. ելնի Իր գահի վրայից, որպեսզի գործի
2. ուխտի տապանակը պատերազմի դաշտ տարվելը՝ Իսրայելի բանակի առջևից (տես՝ Թվոց 10:35)

**68:2** Պարտության մի քանի փոխաբերություններ՝

1. ցրվող ծխի պես
2. փոթորկից առաջ ծխի պես
3. ՅԱՀՎԵԻ ներկայությունից մոմի պես հալվող (տես՝ Սաղմ. 97:5, Միքիա 1:4)
4. կորչեն (այսինքն՝ բնաջնջվեն, BDB 1):

**68:4** Այս համարն ունի չորս ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ, որոնք ցույց են տալիս արդարի գործողությունները:

1. երգեցե՛ք Աստծուն՝ տաճարի գործը
2. Նրա անվանը փառաբանություններ երգեցե՛ք՝ տաճարի գործը
3. մեծարե՛ք երկինքների վրա ձիավորողին՝ պատրաստության արքայական փոխաբերություն, տես՝ Եսայի 35:6-10, 40:3-4, 57:14, 62:10
4. ցնծացե՛ք Նրա առաջ՝ տաճարի գործը

Այս Սաղմոսի միավորող թեման տաճարի երկրպագությունն է (տես՝ Սաղմ. 68:5, 24-27, 29, 35):

❖ **«ով ձիավարում է անապատի միջով/ երկինքներով»** ՅԱՀՎԵԻ ամպերի վրա ձիավարելու հասկացությունը (տես՝ Սաղմ. 68:33) ակնարկ է *Psalmist*-ին, քանանացիների պանթեոնի փոթորկի աստվածը, որը անձրև էր ուղարկում: Հանախ հեթանոս աստվածների անունները վերագրվում էին ՅԱՀՎԵԻՆ, որը միակ ճշմարիտ Աստվածն է (տես՝ 2 Օրին. 33:26, Եսայի 19:1):

MT տալիս է «անապատներ» (BDB 787), սակայն KB 879 առաջարկում է «ամպեր» Ուգարտական արմատից (տես՝ Սաղմ. 104:3): Սա լավագույնս է համապատասխանում համատեքստին (տես՝ NKJV, NRSV, TEV, NJB, JPSOA, REB, տես՝ Սաղմ. 18:9-15):

ASV վերցնում է 27 (BDB 591 II), որը նշանակում է «արևմուտք»:

Թարգումը հետևելով Փեշիտտային և ավելի ուշ գրված Քինգ Ջեյմս թարգմանությանը, տալիս է «երկինքը», տես՝ Սաղմ. 68:33:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 68:5-6**

<sup>5</sup>Որբերի հայրն ու որբեայրիների իրավունքը

Պաշտպանողը Աստված է՝ Իր սուրբ բնակարանում:

<sup>6</sup>Աստված միայնակներին ընտանիքների մեջ է դնում,

Շղթայակապներին դուրս է բերում,

Բայց ապստամբները չոր տեղում են բնակվում:

**68:5-6** Ուշադրություն դարձրե՛ք այն մարդկանց տեսակներին, որոնք համար Աստված գործում է որպես նրանց դատապաշտպան (այսինքն՝ Ելից 22:23):

1. որբերը՝ Ելից 22:22, 2 Օրինաց 14:29, 24:17, Սաղմ. 146:9, Եսայի 1:17, Երեմ. 7:6, Հակ. 1:27
2. որբեայրիները՝ Ելից 22:22, 2 Օրինաց 14:29, 24:17, Սաղմ. 146:9, Եսայի 1:17, Երեմ. 7:6, Հակ. 1:27
3. միայնակը – BDB 402, KB 405, արաբերենից «մենակ լինել»
4. աղքատը՝ Հոր 31:16-20, Սաղմ. 69:33 (բառացի՝ «ճորտը», BDB 64), ՅԱՀՎԵԻ հոգ է տանում «կարիքավորի» համար (BDB 776) Սաղմոս 68:10-ում:

Ուշադրություն դարձրե՛ք, որ Սաղմ. 68:6-ում Աստծո բնավորության գծերի, շարունակական գործողությունների միջև տարբերություն կա՝

1. ընտանիքների մեջ է դնում (բառացի՝ «բնակության տեղ է հատկացնում») – BDB 442, KB 444, *Hiphil* ԴԵՐԲԱՅ
2. դուրս է բերում – BDB 422, KB 425, *Hiphil* ԴԵՐԲԱՅ

քանի որ աղքատն ու կարիքավորը, ինչպես որ հակադրված են մշտական բնակության վայր ունեցող (BDB 1014, KB 1496, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ) համառի՝ ապստամբի հետ, որը չի փոխվում (BDB 710, KB 770, *Qal* ԴԵՐԲԱՅ) և ով բնակվելու է «չոր տեղում» (BDB 850, ՀԿ-ում միայն այստեղ է, սակայն որը ՅԱՀՎԵԻ ներկայության բացակայության և Նրա դատաստանի նշանի ընդհանուր նկարագրություն է, տես՝ Սաղմ. 78:17, 107:34, 40):

❖ **«ապստամբները չոր տեղում են բնակվում»** Հնարավոր է զարմանաք, թե արդյոք այս ապստամբները միևնույն մարդիկ են, որոնք նշված են Սաղմ. 68:1-2-ում: Սակայն Սաղմ. 68:5-6-ի համատեքստը ակնարկում է, որ նրանք իսրայելացի ուխտի անհավատարիմ մարդիկ են:

Ուշադրություն դարձրեք, որ բարգավաճումը հետևում է հավատարիմ հետևորդներին, իսկ անձրևների պակասը՝ ապստամբներին: Նմանօրինակ աստվածաբանությունը, որը հիմնված է ուխտի հնազանդության վրա (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30) հայտնի է որպես «երկու ճանապարհ» (տես՝ Սաղմ. 68:7-10, 2 Օրին. 30:15-20, Սաղմոս 1):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 68:7-10**  
**7Ո՛վ Աստված, Քո ժողովրդի առջևից գնալիս,**  
**Անապատի միջով անցնելիս, Սելա**  
**8Երկիրը ցնցվեց, երկինքն էլ ցող կաթեցրեց Աստծո ներկայությունից .**  
**Սինան ինքն էլ շարժվեց Աստծո՝ Իսրայելի Աստծո, ներկայությունից:**  
**9Դու, ո՛վ Աստված, առատ անձրև ուղարկեցիր,**  
**Հաստատեցիր Քո ժառանգությունը, երբ այն հոգնած էր:**  
**10Քո ժողովքն այդտեղ բնակվեց .**  
**Քո քաղցրությամբ պատրաստություն տեսար աղքատի համար, ո՛վ Աստված:**

**68:7-10** Շեշտադրությունը «երկու ճանապարհների» վրա շարունակվում է: Այս պարբերությունը կարծես թե միաձուլում է՝

1. Անապատի դեզերման շրջանը (այսինքն՝ Իսրայելը առաջնորդվում էր ՅԱՀՎԵԻ կողմից՝ ամպի միջոցով, տես՝ Ելից 13:21, 14:19, 24, Սաղմ. 78:14, 105:39) և հրաշքով մատակարարվում էր (այսինքն՝ ջուրը, մանանան, լորամարգիները)
2. Խոստացյալ Երկրի գյուղատնտեսական առատությունը (այսինքն՝ Հորդանան և Քանան)

**68:7 «Քո ժողովրդի առջևից գնալիս»** Սա «սուրբ պատերազմի» դարձվածք է: Պատերազմները ՅԱՀՎԵԻ հաղթանակով էին ավարտվում: Նա գնում էր Իր ժողովրդի առջևից պատերազմի դաշտ (տես՝ Դատ . 4:14, 2 Թագ. 5:24): Սա հաճախ Ուխտի Տապանակի խորհրդապատկերով էր, որը կրում էին Ղևտացիները՝ բանակի գլուխն անցած:

**«Երբ դու անցնում էիր անապատի միջով»** Սա վերաբերում է Անապատի Դեզերման Շրջանին (տես՝ Դատ . 5:4-5): ՅԱՀՎԵՆ պաշտպանեց, առաջնորդեց, ապահովեց Իսրայելին բոլոր այն բաներով, ինչի կարիք ունեցավ, երբ նրանք իրենց անհավատության պատճառով նախքան Քանանի երկիր մտնելը քառասուն տարի դեզերեցին (տես՝ Թվոց 13-14): ՅԱՀՎԵՆ ուշադիր էր Իսրայելի հանդեպ այս ժամանակահատվածում այնպես, որ հետագայում ռաբբիներն այն անվանում էին «ՅԱՀՎԵԻ և Իսրայելի միջև մեղրամիս»:

❖ **«Սելա»** Տես Սաղմոս 3:2-ի գրառումը և Սաղմոսացի Ներածություն, VII:

**68:8 «Երկիրը ցնցվեց»** Սա թե՛ ՅԱՀՎԵԻ ներկայության համար կիրառվող փոխաբերություն է (տես՝ Հովել 2:10, Մատթ. 27:51) և թե՛ Նրա ներկայության բառացի ֆիզիկական դրսևորումը (տես՝ Ելից 19:16-18, Դատ. 5:4-5):

❖ Նկատեք, որ «Մինայի Աստված» (տես՝ օրենքի տալը, Ելից 19-20) խոսքը համագոր է «Իսրայելի Աստված» խոսքին: Հեղինակը կիրառում է մի քանի տարբեր անուններ «Աստծո» համար (տես՝ Համատեքստային Հասկացություններ, Բ, 4): Իսրայելի յուրահատկությունը ՅԱՀՎԵԻ ներկայությունն էր (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ) և Նրա հայտնությունը Իր գործերի, խոստման և գրավոր հայտնության (ՀԿ) միջոցով:

**68:9 «Քո ժառանգությունը»** Այս տերմինը (BDB 635) կարող էր վերաբերել՝  
1. ուխտի ժողովրդին (տես՝ 2 Օրինաց 32:9, 3 Թագ. 8:51, Հովել 3:2, Երեմ. 10:16):  
2. Քանանի երկիրը (տես՝ Սաղմ. 79:1, Երեմ. 2:7):  
«Երկիր» տերմինը (BDB 75, KB 90) կիրառվում է ամբողջ երկրի համար (տես՝ Ելից 19:5), սակայն հատկապես՝ Քանանի (տես՝ Դևտ. 25:23, 2 Օրինաց 32:43, 2 Մնաց. 7:20, Եսայի 14:2, 25, Եզեկ. 36:5):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՐ, ՀՈՂ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

- 68:10**
- NASB** «արարածներ էին բնակվում այնտեղ»
- NKJV** «Քո ժողովքն էր բնակվում այնտեղ»
- NRSV** «քո հոտը բնակություն գտավ այնտեղ»
- TEV** «քո ժողովուրդը իրենց տունը այնտեղ դրեցին»
- LXX** «քո կենդանիները այնտեղ են ապրում»
- NJB** «Քո ընտանիքը տուն գտավ»
- JPSOA** «Քո ցեղն այնտեղ է բնակվում»

LXX թարգմանել է սա որպես «կենդանիներ», սակայն ԻԳԱԿԱՆԸ (BDB 312) նշանակում է «ժողովք» (տես՝ 2 Թագ. 23:13):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 68:11-14**  
<sup>11</sup>ՏԵՐԸ պատգամ տվեց, այն ավետարանողների բանակը մեծ է:  
<sup>12</sup> «Չորությունների թագավորները փախչում են,  
**Փախչում են, իսկ տան մեջ բնակվող կինը ավարն է բաժանում:**  
<sup>13</sup>Եթե փարախների մեջտեղում պառկած էլ լինեք,  
**Աղավնու թևերի պես պիտի լինեք՝**  
**Արձաթով պատված ու նրա փետուրները՝ դեղին ոսկով»:**  
<sup>14</sup>Երբ Ամենակարողը թագավորներին ցրեց այդ երկրում,  
**Այն Սաղմոնի միջի ձյան պես ճերմակեց:**

**68:11-14** Այս պարբերությունը, ինչպես Սաղմ. 68:1-4 և 19-23 ունի ռազմական թեմա: Սաղմ. 68:11բ և 12բ-ի պատճառով այն կարող է վերաբերել (1) Հեսուի Քանանի նվաճմանը կամ (2) Քանանի/Իսրայելի վրա հարձակմանը, որը պարտություն կրեց:

**68:11-12** Սա վերաբերում է աստվածատուր հաղթանակի լուրին: Բարի լուրը ծննդաբերող կանանց մասին մեջբերումը արձանագրված է Սաղմ. 68:12-ում: Կանայք, ովքեր ուրախանում էին ռազմական հաղթանակով և աղաղակում էին Աստծո գործերի մասին, նույնպես արձանագրված են «Մարիամի երգի» մեջ՝ Ելից 15:20-21-ում:

❖  
**NASB, NKJV** «նա, որ մնում է տանը»

**NRSV, TEV, REB**  
**NJB**  
**JPSOA**

**«տանը գտնվող կինը»**  
**«տանը գտնվող ազնիվները»**  
**«տան տիկինները»**

MT տալիս է «արոտներ» (BDB 627 II), սակայն անգլերեն բոլոր թարգմանությունները փոխում են արմատը «կանայք» բառի:

1. Արոտներ - 𐤀𐤓
2. կանայք - 𐤀𐤓𐤁

**68:13** Այս համարը կարելի է մի քանի կերպ հասկանալ:

1. աղավնին (տես՝ Սաղմ.68:13բ-գ) ՅԱՀՎԵԻ համար անուն է, ինչպես *Շադդայր* (այսինքն՝ Ամենակարող) – NJB
2. այն հեզնական ակնարկ է այն փաստին, որ ոմանք չէին գնում պատերազմի (այսինքն՝ 13ա, TEV, տես՝ Դատ. 5:15-16)
3. այն հաղթական Իսրայելին դիմելու մի ձև է
4. այն պատերազմի ավարի մի մասն է (այսինքն՝ զավթված քանդակներ, ձեռքի աշխատանք հանդիսացող գանձեր, հավանաբար *Իշթարի*, *Ասթարտի* երկրպագության հետ կապված)
5. Սաղմ.68:11-ի պատգամաբեր կանանց հանդերձներին վերաբերող (Բիդներ, *Թինդեյլ Մեկնաբանության գիրք*, էջ՝ 259):
6. փախուստի դիմած թշնամու պատերազմական դրոշները (IVP *Աստվածաշնչյան հիմքերի մեկնություն*, էջ՝ 538)
7. աղավնիներ բաց թողնելը հաղթանակի տոնակատարության մի մասն էր կազմում (Ֆ. Ֆ. Բրյուս, *Հարցերի Պատասխաններ*, էջ՝ 23-24):

❖ **«փարախներ»** Այս բառը (BDB 1046, KB 1637) հազվադեպ է: Այս թարգմանությունը հիմնված է Դատ. 5:16-ի վրա: Նմանօրինակ բառ գտնվում է Եզեկ. 40:43-ում, թարգմանված «կեռեր»: Դա կարող էր նշանակել «եփելու կրակ» կամ «կաթսա» (BDB 1046):

**68:14 «Ամենակարողը»** Տես Համատեքստային Հասկացություններ, Բ, 4)



**NASB, NRSV**  
**NKJV**

**«այնտեղ»**  
**«նրա մեջ»**

MT տալիս է ԻԳԱԿԱՆ ՆԱԽԴԻՐ (BDB 88), որը կարծես թե կապում է Սաղմ.68:10-ի հետ (այսինքն՝ մի վայր, որտեղ ՅԱՀՎԵԻ ժառանգության համայնքն է բնակվում):

❖ **«Սաղմոն»** Սա մի լեռ է, որը գտնվում է Սյուքեմի մոտ (տես՝ Դատ.9:48): Համաձայն BDB-ի խոսքը Հորդանանի արևելյան կողմի մասին է: Պատճառը Սաղմ. 68:15-ի «Բասան» անունն է:

NJB թարգմանում է այն «Մուծ Լեռ», քանի որ աքքադերեն արմատը կապված է Դավթի մարդկանցից մեկի հետ, որը Բենիամինի ցեղից էր (տես՝ 2 Թագ. 23:28):

ABD (էջ՝ 1039) ավելացնում է երրորդ առաջարկը, որը բխում է արաբերեն «լույս» կամ «վեհափառություն» արմատից:

«Ձյուն» բառի կիրառությունը նույնպես խնդրահարույց է: Այն կարող է վերաբերել՝

1. Պատերազմի ժամանակ աստվածային քայլին, ինչպես Դատավորաց 4-5-ի անձրևը:
2. փոխաբերական իմաստով գրավված տարածքը աղով պատվելը՝ ձյան պես (տես՝ Դատ. 9:45)
3. փոխաբերական՝ մահացած զինվորների սպիտակ ոսկորները (IDB, հատոր 4, էջ՝ 933)
4. նվաճողների պարտության պատմական տարեթիվը նշելու կերպ
5. «ձնել, ձյուն գալ» ԲԱՅԸ *Hiphil* ՀԱՅՑԱԿԱՆ ձևն է, հետևաբար, «թող ձյուն գա Սաղմոնում» (այսինքն՝ աստվածային հաղթանակի կանխասման նշան)
6. թշնամու զենքերը գետնին թողնված, երբ նրանք փախուստի են դիմել (NASB Սերտողության Աստվածաշունչ, էջ՝ 806):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 68:15-18**

<sup>15</sup>Աստծո լեռը Բասան լեռան պես է,

Բարձր լեռը Բասան լեռան պես է,

<sup>16</sup>Ո՛վ բարձր լեռներ, ինչո՞ւ եք նախանձով նայում .

Սա այն լեռն է, որի մեջ Աստված ցանկացավ բնակվել .

Հիրավի, ՏԵՐՆ այնտեղ է բնակվելու հավիտյան:

<sup>17</sup>Աստծո կառքերը քսան հազար են, հազարավոր հրեշտակներ .

ՏԵՐԸ նրանց մեջ է՝ Իր սուրբ տեղում՝ Սինայի մեջ:

<sup>18</sup>Բարձր տեղ ելար, գերությունը գերի դարձրիր,

Պարզներ ստացար մարդկանց համար

Ու նաև՝ ապստամբների համար,

Որպեսզի ՏԵՐ Աստված նրանց մեջ բնակվի:

**68:15-18** Այս պարբերությունը Սինա լեռան մասին է (այսինքն՝ Քորեբ լեռը) որպես Աստծո հատուկ բնակության վայր: Այլ ազգերի այլ լեռները նախանձում են (տես՝ Սաղմ .68:16):

**68:15**

**NASB, NKJV, NJB, LXX**

**NRSV, TEV**

**JPSOA**

**REB**

«Աստծո լեռը»

«Ո՛վ հզոր լեռ»

«Ո՛վ փառահեղ լեռ»

«բարձր սար»

Եբրայերեն *Էլնիիմ* (BDB 43) տերմինը կարող է կիրառվել ավելի ընդգծված իմաստով (BDB 43, #2գ, տես՝ Հոբ 1:16):

Այս նույն սարը կոչվում է «շատ գագաթների լեռ» պոեզիայի մյուս տողում: Այս տերմինը (BDB 148, KB 174) գտնվում է ՀԿ-ում միայն այստեղ: Այն կարող է նշանակել՝

1. շատ գագաթներ (այսինքն՝ լեռնաշղթա)
2. օղակ գագաթ

**68:16բ,գ** Սովորաբար ՅԱՀՎԵԻ մշտական բնակությունը ուխտի տապանակն է, որի գտնվելու վայրը Մորիա լեռան վրա Երուսաղեմում էր (տես՝ 2 Օրինաց 12:5, Սաղմ .87:1-2, 132:13-14), սակայն այստեղ մենք խոսում են Ելիցի մասին: ՅԱՀՎԵՆ Իրեն հայտնեց Սինա լեռան՝ Քորեբի վրա (տես՝ Ելից 19-20), որտեղ Մովսեսին տվեց Օրենքը, նախքան կլիներ ուխտի տապանակը:

❖ «**նախանձով նայում**» Սա Բասանի նախանձ սարերի անձնավորում է: ԲԱՅԸ (BDB 952, KB 1280, *Piel* ԱՆԿԱՏԱՐ) ՀԿ-ում միայն այստեղ է հանդիպում:

**68:17** Այս համարի նկարագրությունը ակնարկում է 2 Օրինաց 33:2-5, որտեղ ցույց է տալիս ՅԱՀՎԵԻ Սինա իջնելը Իր սուրբ հրեշտակային խմբով (տես՝ Դան .7:10, Հայտն .5:11):

ՅԱՀՎԵՆ գործածում է Սինա լեռը որպես Իսրայելին հանդիպելու տեղանք ուխտ կապելու հայտնության համար, սակայն Երուսաղեմի Մորիա լեռը ընտրեց որպես Իր ներկայության վայրը (այսինքն՝ ուխտի տապանակի համար) որպեսզի մշտապես այնտեղ բնակվի (տես՝ Սաղմ .68:11):

❖ «**հազարավոր**» Սա Եբրայերեն BDB 48 և 104 ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ է: Երկրորդ բառը ՀԿ-ում միայն այստեղ է գտնվում: BDB սահմանում է այն որպես «կրկնություն» կամ «կրկնակի»: Համատեքստը և գուգահեռականությունը օգնում են սահմանել այս տերմինը:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀԱՉԱՐ (*eleph*)**

**SPECIAL TOPIC: THOUSAND (*eleph*)**



Եբրայերեն *eleph* բառը նշանակում է «հազար» (BDB 48, KB 59 II): ՀԿ-ում այն կիրառվում է մի քանի իմաստով:

1. ընտանեկան միավորի, Հեսու 22:14, Դատ. 6:15, 1 Թագ. 23:23, Չաք. 9:7, 12:6
2. ռազմական միավորի, Ելից 18:21, 25, Թվոց 13:14, 2 Օրինաց 1:15
3. բառացի հազար, Ծննդ. 20:16, Ելից 32:28, Թվոց 35:4, Նեեմ. 3:13
4. սիմվոլիկ թիվ, Ծննդ. 24:60, Ելից 20:6, 34:7, 2 Օր. 7:9, Սաղմ. 119:72, Երեմ. 32:18
5. Ուգարտական համագործը՝ *alluph* նշանակում է «ցեղապետ», Ծննդ. 36:15

Այս տարբեր նշանակությունները պատճառ են հանդիսանում, որ արդի մեկնաբանները հարցադրեն թվերի բառացիությունը՝

1. Ելիցի (տես՝ ստորև տրված Հատուկ Թեման)
2. Իսրայելական ցեղային ռազմական միավորները (այսինքն՝ 1 Մնաց. 12:35):

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԼԻՑԻ ԱՆՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**68:18** Համատեքստում սա նկատի ունի Աստծուն՝

1. Սինա լեռան գագաթը իջնելիս
2. հաղթողին հարկատու լինելու ռազմական փոխաբերություն

Պողոսը մեջբերում է այս համարը Եփես. 4:8-ում, սակայն Թարգումի թարգմանությունից, որը փոխում է «ստանալը» «տալու» հետ: Սա նկատելիորեն փոխում է MT-ի նշանակությունը: Փեշիտտան տալիս է՝

«Դու օրհնեցիր մարդկանց պարգևներով, սակայն ապստամբները չեն բնակվելու Աստծո ներկայության առջև»:

Անշուշտ հնարավոր է, որ MT-ի նկատառումն այն է, որ Աստված ընդունում է ազգերի պարգևները և բաժանում դրանք Իր ժողովրդին (տես՝ Գլխուն Արչեր, *Աստվածաշնչի Դժվարությունների Հանրագիտարան*, էջ՝ 404-405):

Ռաբբիները Սաղմոս 68-ը դիտարկում են որպես ՅԱՀՎԵԻ Սինա լեռան վրա Մովսեսին Օրենքը տալու հետ կապված Սաղմոս: Նրանք մեկնաբանում են «ստացավ/տվեց» դիմամիկան որպես Մովսեսական Օրենքին վերաբերող, սակայն Պողոսն այն տեսնում է որպես Քրիստոսի մեջ Նոր Դարաշրջան: Նա լիազորում է Իր եկեղեցուն նոր հայտնությամբ (տես՝ Գ. Բ. Քայրդ, *Աստվածաշնչի լեզուն և տեսարանները*, էջ՝ 170):

Սաղմ. 68:15-18 համատեքստում 18-րդ համարը պետք է որ նկատի ունենա ՅԱՀՎԵԻ «սուրբ պատերազմը», ըստ որի Իսրայելի թշնամիները, թե՛ ընթացիկ (այսինքն՝ անապատում դեգերելիս) և թե՛ Քանանի նվաճման ժամանակ, պարտվեցին: Սա կարող է ակնարկ լինել «Մովսեսի օրհնություններին», որը արձանագրված է 2 Օրինաց 33-ում, որպես հետագայում Քանանի նվաճման և բնակության վրա այս օրհնության տարածում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 68:19-23**

**<sup>19</sup>ՏԵՐԸ թող օրհնյա՛լ լինի,**

**Որ օրեցօր մեզ բարերարություններով է ծանրաբեռնում,**

**Մեր փրկության Աստվածը: Մեկա:**

**<sup>20</sup>ՏԵՐ Աստծուն են պատկանում մահվան ելքերը:**

**<sup>21</sup>Աստված վիրավորելու է Իր թշնամիների գլուխը եղողին՝**

**Իր անօրենության մեջ ընթացողի մազմզոտ գանգը:**

**<sup>22</sup>ՏԵՐՆ ասաց. «Իմ ժողովրդին Բասանից ետ եմ բերելու,**

**Ծովի խորքերից ետ եմ բերելու.**

**<sup>23</sup>Որ ոտքդ թշնամիներիդ արյան մեջ թաթախվի,**

**Ծներիդ լեզուն թշնամիներից իր բաժինն առնի»:**

**68:19-23** Քանի որ «Բասանը» նշվում է Սաղմ. 68:15 և 22-ում, պետք է որ առնչություն լինի Սաղմ. 68:11-14 և 19-23 ռադմական կողմնորոշում ունեցող այս պարբերությունների միջև: Գոյություն ունեն մի քանի հաստատ ճշմարտություններ.

1. Աստված Իսրայելի հետ է
2. Աստված նրանց ազատելու է իրենց թշնամիներից

Այս պարբերությունը օգտագործում է Աստծո համար երեք անուն (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ):

1. *Ադոնայ*, Սաղմ. 68:19,20,21
2. *Էլ*, Սաղմ. 68:19բ,20 (երկու անգամ)
3. *ՅԱՀՎԵ*, Սաղմ. 68:20

**68:19 «ով ամեն օր մեր բեռը կրում է»** Սա կարող է վերաբերել՝

1. ՅԱՀՎԵԻ մշտական ներկայությունը Իսրայելի հետ
2. Իսրայելի կողմից փրկչի՝ փրկության՝ ազատության մշտական կարիքը (հոգևոր և ֆիզիկական, տես՝ Սաղմ. 65:5):

Այն ճշմարտությունը, որ ՅԱՀՎԵՆ հոգում է Իրենների համար, գտնվում է Սաղմ. 55:22, Եսայի 46:4-ում:

**68:20-23** Այս համարները շեշտադրում են ՅԱՀՎԵԻ կողմից իսրայելացիների բանակը ազատելուն (ոմանք մեռան, բայց շատերը փրկվեցին): Նրանց թշնամիները կարող են վազել, սակայն չեն կարող փախչել (տես՝ Սաղմ. 68:22, Ամոլս 9:1-4):

Սաղմ. 68:23 պարունակում է պարտության և ամոթի դարձվածքներ:

1. ոտքերդ թշնամիներիդ արյան մեջ թաթախվի (տես՝ Սաղմ. 58:10, տարածված դարձվածք է քանանացիների գրականության մեջ *Բահադի* և *Անսաթի* համար)
2. շները ուտեն թշնամու մեռած զինվորներին (տես՝ 3 Թագ. 21:19, Երեմ. 15:3):

**68:21 «մազմզոտ գանգր»** Սա մարդու գանգի համար օգտագործվող նկարագրություն է (տես՝ 2 Օր. 32:42): Երկար մազերը ՀԿ-ում համարվում էին Աստծուն նվիրված լինելու սիմվոլ (տես՝ Թվոց 6), սակայն այստեղ պարտված թշնամիների, հավանաբար նկատի ունենալով նրանց նվիրումը հեթանոս որևէ աստծու և ՅԱՀՎԵԻՆ ընդունելու հերքում:

**68:22 «Բասանից»** Դժվար է իմանալ, թե արդյոք «Բասանը» (BDB 143, 𐤁𐤁) պետք է լիներ՝

1. կապված Սաղմ. 68:15-ի հետ՝ որպես աշխարհագրական տեղանք
2. ուղղված է ԴԵ, ուգարտական «օձ» արմատին, որը համագոր կլիներ «ծովի խորքերը» հաջորդ տողում առկա խոսքին (NEB, տես՝ Ամոլս 9:3, որտեղ առկա է միևնույն զուգահեռականությունը եբրայերենի «օձ» բառի համար): «Խորքերը» նաև կապված է Ելիցի հետ, որտեղ ՅԱՀՎԵՆ կիսում է ծովը և Փարավոնի պալատական թիկնագորը խեղդվում է (տես՝ Ելից 15:5, Նեեմ. 9:11):

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 68:24-27**

<sup>24</sup>Քո երթը տեսան, ո՛վ Աստված.

Իմ Աստծո, իմ Թագավորի երթը սրբարանում:

<sup>25</sup>Առջևից երգողներն էին գնում, ետևից նվագածուները.

Նրանց մեջ էին նաև թմբուկ զարկող մանկամարդ աղջիկները:

<sup>26</sup>«Հավաքների մեջ Աստծո՛ւն օրհնեցեք՝ ՏԻՐՈՋԸ,

Դո՛ւք, որ Իսրայելի ակունքից եք»:

<sup>27</sup>Այնտեղ են փոքր Բենիամինը՝ իրենց կառավարչի հետ,

Հուդայի իշխանները՝ իրենց խորհրդով,

Չաբուդոնի իշխաններն ու Նեփթադիմի իշխանները:

**68:24-27** Այս պարբերությունը նկարագրում է տաճար գնացող տոնախմբության շքերթը: Հավանաբար տապանակը, որը տարվել էր պատերազմի դաշտ, վերադառնում է.

Գոյություն ունեն այս ամբոխում նշված կամ նկատի առնված մի քանի խմբեր:

1. իսրայելացի թագավորը որպես ՅԱՀՎԵԻ՝ իրական Թագավորի, ներկայացուցիչ:
2. Ղևտացի երգիչներն ու երաժիշտները
3. օրհորդները թմբուկներով (տես՝ Ելից 15:20, Դատ . 11:34, Երեմ . 31:4)
4. տասներեք ցեղերը, որոնք ներկայացված են՝
  - ա. Բենիամինի կողմից
  - բ. Հուդայի կողմից
  - գ. Չաբուդոնի կողմից
  - դ. Նեփթաղիմի կողմից

**68:24**

**NASB, NKJV**

«Նրանք տեսել են»

**NRSV**

«երևում են»

**TEV**

«տեսած բոլորի կողմից»

**NJB**

«որ բոլորը տեսնեն»

**JPSOA**

«Մարդիկ տեսնեն»

Հարցն այն է, թե ո՞վ է տեսնում: Արդյո՞ք իսրայելացի երկրպագուներն էին, թե բոլոր հակառակվող ազգերը: Պարբերությունը նկատի ունի Իսրայելին, սակայն Մաղմուրը որպես մի ամբողջություն, նկատի ունի «ազգերին» (տես՝ Մաղմ . 68:28-31, 32-35):

❖ «**երթ**» Այս տերմինը (BDB 237) կիրառվում է միայն այստեղ՝

1. Իսրայելի ժողովրդի համար, որոնք գալիս են տաճար
2. Աստծո համար, որ գալիս է տաճար

❖ «**իմ Թագավոր**» Առաջին անգամ, որ հատուկ կերպով ՅԱՀՎԵՆ նշվում է որպես Թագավոր, 3 Թագ . 8:4-9-ում է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏՈՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

❖ «**սրբարան**» Այս տերմինը (BDB 871) կիրառվում է՝

1. Աստծո ներկայությամբ առանձնացված սուրբ վայրերի համար
2. խորանի և իր սրահների համար
3. տաճարի և այն շրջապատող տարածքների համար
4. Երուսաղեմի և իր բլուրների համար

**68:26 «Աստծուն օրհնեցեք»** Սա *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Իսրայելը պետք է փառաբանի ՅԱՀՎԵՆ Իր բնավորության և Իր գործերի համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏՈՆ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ

❖ «**Իսրայելի ակունքը**» Սա յուրահատուկ արտահայտություն է: Այն կարծես թե վերաբերում է ՅԱՀՎԵՆ կողմից Նահապետների կանչին և Նրա ներգրավվածությունը նրանց անպտուղ կանանց կյանքում՝ զավակներ ունենալու համար: Միակ զարտուղի հավանական համագոր խոսքը գտնվում է Եսայի 48:1-ում:

**68:27** Շատ ենթադրություններ են եղել այն մասին, թե ինչու են միայն մի քանի ցեղեր նշված: Կարծում են երեք հնարավոր տարբերակ կա՝

1. Նրանք ներկայացնում են ամբողջ Խոստացյալ Երկիրը

- ա. Հուդան և Բենիամինը՝ հարավը (այսինքն՝ Հուդա)
- բ. Չաբուդոնը և Նեփթադիմը՝ հյուսիսը (այսինքն՝ Իսրայելը)
- 2. նրանք ներկայացնում են Հակոբի կանանց (այսինքն՝ 13 ցեղերի աղբյուրը)
  - ա. Ռաքելը՝ Բենիամինին
  - բ. Լիան
    - 1) Հուդա
    - 2) Չաբուդոն
  - գ. Բաղդան՝ Նեփթադիմը
  - դ. Չեփդան՝ ոչ մի զավակ չի թվարկվում
- 3. Նրանք ներկայացնում են ամենափոքր ցեղից մինչև ամենամեծը:

- ❖ **«ամենափոքրը»** MT տալիս է «նրանցից ամենափոքրը» (BDB 859 I): Սա կարող է նշանակել՝
  1. Բենիամինը Ռաքելի ամենափոքրն էր
  2. մի փոքր ցեղ, սակայն Իսրայելի առաջին թագավորը՝ Սավուղը, հենց այդ ցեղից էր

❖	
<b>NASB</b>	<b>«իրենց ամբոխի մեջ»</b>
<b>NKJV</b>	<b>«և նրանց խումբը»</b>
<b>NRSV</b>	<b>«մարմնի մեջ»</b>
<b>TEV</b>	<b>«իրենց խմբով»</b>
<b>NJB</b>	<b>«բաց գույնի հագուստներով»</b>
<b>JPSOA</b>	<b>«ով նրանց հրամայեց»</b>

- MT տալիս է **םמגר** (BDB 920), որը կարող է վերաբերել՝
1. **גר** - քարկոծելով սպանելուն («պարսատիկով», **מגרמ**, BDB 920)
  2. **מגר** – քարերի կույտ կամ մարդկանց ամբոխ (BDB 920)
  3. **שגר** – ամբոխ (BDB 921)

NJB շտկում է բառը (1) **םמקרה**, «ասեղնագործության» (BDB 140) կամ (2) «խայտաբղետ իրեր»՝ **מקרה** (տես՝ Սաղմ. 45:13բ-14ա): UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 293) տալիս է «ամբոխ» բառին “B” գնահատական (որոշ չափով կասկածելի), սակայն այն բնորոշ չէ արմատին (այսինքն՝ #2 կամ #3):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 68:28-31**

**<sup>28</sup>Քո Աստվածը քո գորությունը հաստատեց,  
 Չորացրո՛ւ, ո՛վ Աստված, այն բանը, որ մեզ համար կատարեցիր:**

**<sup>29</sup>Երուսաղեմում եղող տաճարիդ համար թագավորները քեզ ընծաներ են բերելու:**

**<sup>30</sup>Սաստի՛ր նիզակակիրների գորախմբին,  
 Ցուլերի բազմությանը՝ ժողովրդի զվարակների հետ մեկտեղ:  
 Մինչև ամեն մեկը երեսնիվայր ընկնի արծաթի դրամներով.**

**Ցրի՛ր պատերազմից հաճույք ստացող ժողովրդին:**

**<sup>31</sup>Եգիպտոսից արքայազուններ են գալու.  
 Եթովպիան իր ձեռքերը շուտով դեպի Աստված է կառկառելու:**

**68:28-31** Այս պարբերությունը ինչ-որ առումով առնչվում է Եգիպտոսում ՅԱՀՎԵԿԻ հաղթանակի հետ: Հայտնի չէ, թե այն Ելիցն է, թե հետագա ռազմական նվաճում:

Այնուհանդերձ, հաղթանակի հետ գալիս է Երուսաղեմում ՅԱՀՎԵԿԻՆ երկրպագելու հրաշալի առիթը (տես՝ Սաղմ. 68:31, Եսայի 19:19-22, 45:14): Այս տիեզերական շեշտադրություն է, (տես՝ Սաղմ. 68:32-35) որը կապում է Սաղմոս 65-68:

**68:28** Չորությունը՝ ուժը (BDB 738) Աստծունն է և Նա՛ է ցույց տալիս Իր ուժը Իր ժողովրդի օգտին, որպեսզի ազգերին գրավի դեպի Իրեն:

**68:29**

**NASB, NKJV, NRSV**

«քանի որ»

**TEV, NJB, JPSOA**

«...ից»

**LXX**

«հետևանքով»

**NET Bible**

«երբ դուք դուրս եկաք դրա միջից»

MT տալիս է ՆԱԽԴԻԲ, որը կարելի է մի քանի կերպ հասկանալ: Այն կարծես թե ակնարկում է Սաղմ . 68:1, որտեղ ՅԱՀՎԵԻՆ ելնում է պատերազմի մեջ Իսրայելի օգտին գործելու:

**68:30 «Սաստի՛ր»** Սա *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (BDB 172, KB 199): Այս տերմինը կիրառվում է ազգերի դատաստանի համար Սաղմ . 9:5, Եսայի 17:13-ում: Այն կարծես թե այստեղ կիրառվում է Եգիպտոսի համար (տես՝ Եզեկ . 29:3, 32:2, հավանաբար Եսայի 27:1): Նա և հարավի ազգերը (այսինքն՝ Եթովպիան, Քուշը) հատուկ նշվում են Սաղմ . 68:31-ում:

NET Աստվածաշունչը (Էջ՝ 934) թարգմանում է այն որպես «պատերազմի աղաղակ»:



**NASB, NRSV**

«ոտքի տակ կոխկռտվել»

**NKJV**

«Մինչև բոլորը ենթարկվեն»

**TEV**

«մինչև որ նրանք բոլորը խոնարհվեն»

**NJB**

«ովքեր խոնարհվեն»

**JPSOA**

«մինչև նվաստացած կգան»

MT տալիս է «տրորել», «դռփել», «տրորելով՝ դռփելով կեղտոտել» (BDB 952, KB 1279, տես՝ Առակ . 25:26): Այս նույն արմատը (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ձևի մեջ) նշանակում է «ինքդ քեզ խոնարհեցնել»: Հավանաբար երկու նշանակություններն էլ ակնարկում են Եզեկ . 32:2 կամ 34:18, որտեղ այս նույն ԲԱՅԸ կիրառվում է Եգիպտոսի խոնարհվելու համար:

❖ «արծաթի /կտորներով/ դրամներով» Դարձյալ հազվադեպ բառեր կամ տերստային աղավաղումները անգլերեն թարգմանությունների անհայտության պատճառ են հանդիսացել:

«Կտորներ» բառը՝ ԿԴ, որը BDB 954 առաջարկում է, նշանակում է «կտոր» կամ «սալիկ»:

Հնարավոր է այն շտկել ԿԶ (BDB 131 I), որը նշանակում է «թանկարժեք հանքաքար» (տես՝ Հոր 22:24, տես՝ NIDOTTE, հատոր 1, էջ՝ 699-700), հավանաբար «ոսկի»: Եթե այդպես է, ապա պոեզիայի այս տողի թարգմանությունը (Սաղմ . 68:30գ) կլիներ՝ «խոնարհվեն արծաթով և ոսկիով» (այսինքն՝ ՅԱՀՎԵԻՆ հարկ տալը):

**68:31**

**NASB, NKJV, REB, LXX**

«Պատվիրակներ են գալու Եգիպտոսից»

**NRSV**

«թող բրոնզ բերվի Եգիպտոսից»

**TEV**

«Դեսպաններ են գալու Եգիպտոսից»

**NJB**

«Եգիպտոսից ազնվականներ պիտի գան»

**JPSOA**

«հարկատուները կգան Եգիպտոսից»

UBS Տերստային Նախագիծը (Էջ՝ 297) տալիս է «բրոնզե իրեր» (BDB 365) խոսքին “B” գնահատական (որոշ չափով կասկածելի): Այն կարելի է գտնել ՀԿ-ում միայն այստեղ: Մյուս թարգմանությունները հետևում են հնագույն տարբերակներին և ռաբբիական ենթադրություններին:

Հնարավոր է Սաղմ . 68:30գ և Սաղմ . 68:31ա,բ դիտարկել որպես Հյուսիսային Աֆրիյան երկրներից Աստծուն հանգանակություն բերողներին նկատի ունեցող խոսքեր (JPSOA):

1. ոսկի
2. արծաթ
3. բրոնզ

❖ «իր ձեռքերը շուտով դեպի Աստված է կարկառելու» Սա համապատասխանում է նախորդ գրառման հասկացությանը: Կարիք չկա ուղղելու «վազել» ԲԱՅԸ (BDB 930, KB 1207, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ) «կարկառելու» (NEB) հետ, երբ MT նույն իրողության դարձվածքն է տալիս:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 68:32-35**

<sup>32</sup>Ո՛վ երկրի թագավորություններ, երգեցե՛ք Աստծուն,  
Փառաբանություններ բարձրացրե՛ք ՏԻՐՈՉԸ, Սելա

<sup>33</sup>Նրան, որ հավիտյանս հավիտենից երկինքների երկնի վրա է ձիավարում .

Ահա Նա ձայն է տալիս Իր հզոր ձայնով,

<sup>34</sup>Փառավորություն վերագրեք Աստծուն .

Նրա գերազանցությունը Իսրայելի վրա է,

Ու Նրա հզորությունն ամպերի մեջ է:

<sup>35</sup>Ահավոր ես, ո՛վ Աստված Քո սուրբ տեղերից:

Իսրայելի Աստվածն է Նա,

Որ Իր ժողովրդին ուժ ու զորություն է տալիս:

Օրհնյալ լինի Աստված:

**68:32-35** Այս պարբերությունը ամրապնդում է Երուսաղեմում ՅԱՀՎԵԻ տիեզերական երկրպագությունը, որն ակնարկվում է համար 31-ում:

Ուշադրություն դարձրեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻՆ՝

1. երգեցե՛ք Աստծուն - BDB 1010, KB 1479, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. փառաբանություններ երգեցե՛ք Տիրոջը – BDB 274, KB 273, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. փառավորություն վերագրեք Աստծուն – BDB 678, KB 733, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 29:1-2, 1 Մնաց. 16:28-29

ՅԱՀՎԵՆ նկարագրված է որպես՝

1. երկինքների երկնքում ձիավարող (այսինքն՝ փոթորկի ամպերի վրա)
2. Ով խոսում է հզոր ձայնով (այսինքն՝ որոտով, տես՝ Եսայի 30:30, Հայտն. 11:19, 14:2, 16:17-18)
3. Նրա գերազանցությունը Իսրայելի վրա է
4. Նրա հզորությունն ամպերի մեջ է
5. ահավոր է Իր տաճարից
6. Իր ժողովրդին ուժ ու զորություն է տալիս
7. օրհնյալ է նրանց կողմից

**68:33ա** Այս նկարագրությունը ետադարձ հայացք է գցում 2 Օրինաց 33:26 և մեջբերվում է Սաղմ. 18:10-ում, նաև նկատե՛ք՝ Սաղմ. 68:4բ:

«Երկինքների երկինքը» մատնացույց է անում երկրի ամպերին (տես՝ Սաղմ. 68:34գ), և ոչ թե Աստծո բնակության վայրը:

Նրա հզոր ձայնը Ծննդոց 1-ում իր արտասանված խոսքով արարելու մասին ակնարկ է:

**68:35 «ահավոր»** Այս նկարագրությունը ետադարձ հայացք է գցում 2 Օրինաց 7:21, 10:17 համարներին, ինչպես նաև Սաղմ. 47:2 և 66:5» Այն վերաբերում է ՅԱՀՎԵԻ սուրբ բնավորությանը և ուխտի փրկագործությանը:

❖ «**ժողովրդին ուժ ու զորություն է տալիս**» Սա կարող է լինել ևս մեկ ակնարկ՝

1. Ելիցին
2. Անապատի Դեզերումներին
3. Քանանի նվաճմանը
4. Իսրայելի հետ Նրա մշտական ներկայությանը: